Գերեզման բրօղաց 2
Դին 'ի գերեզման դագաղակրաց. : 2
Հասարակ հրաւիրեալ ժողովրդոց արանց իւրաքանչիւր անձանց կտաւ սպիտակ վեց կանդուն։

Աղքատքն կարող են հրաւիրել ընկերութիւն և երթացողն պարտ են անխնայ երթալ և մի՛ սպասել 'ի վեր յիշեցեալ սովորական հատուցման ոչ ինչ, բայց վարձ վաստակոց իւրեանց հատուցանէ նոցայ Տէր 'ի հանդերձելումն, և մերձաւորք ննջեցելոց առաւել փառաւորել կարեն ննջեցեալս իւրեանց պահելով ստացուածս ննջեցելոց վասն ուստերաց և դստերաց ննջեցելոց, քանթէ բաշխել այլոց, և մերձաւորք ննջեցելոյն պարտ է իւրաքանչիւրոք ելցեն 'ի դործս իւրեանց, սուգ նոցա միմիայն երիս ամիս զգեստ սեաւ զգենուլ բաւական լինիցի։

ԳԼՈՒԽ ՅԷԸ.

Ոչ ոք եկեղեցականք, տնանկ և աղքատք մի՛ բարկանասցեն 'ի վերայ սահմանին կարգադրութեան մերոյ, 'ի գլուխ 377, յօրինաց, վասն զի ազգն հայոց ո՛չ խնայէ ողորմութիւն պաշտօն պատարագէց և մխիթարութիւն տնանկաց և աղքատաց, եթէ ո՛չ ամենայն զօրութենէ պահէ 'ի միտս իւր անպակաս առնել նոցա 'ի ամենայն